2018 թ. Իրավապաշտպան գործունեության ամփոփում

Summary of the protection activity during 2018

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

www.prwb.am

Բովանդակություն

Իրավապաշտպան գործունեության ամփոփում 3

2016թ. հուլիսյան դեպքեր 4

ՄԻԵԴ ներկայացված այլ գործեր 4

Ընթացիկ և ավարտված գործեր 5

Մասնակցություն և ներգրավածություն 6

Այլընտրանքային կարծիքներ 8

Վերլուծություն 8

Տեղեկանքներ 8

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

Իրավապաշտպան գործունեության ամփոփում

2018թ.

2018 թվականը կազմակերպության գործունեության համար նշանավորվել է մարդու իրավունքների խախտումների փաստագրման և պաշտպանության լայնածավալ գործողություններով: 2018թ. ապրիլ ամսին կազմակերպությունը ստանձնել է Հայաստանում 2018թ. ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների հետևանքով տուժած քաղաքացիների պաշտպանությունը:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ փաստաբանները այդ օրերին այցելել են ոստիկանական բաժանմունքներ, հիվանդանոցներ, հատուկ քննչական ծառայություն աջակցություն տրամադրելով խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած իրավախախտումներից տուժած քաղաքացիներին:

Կազմակերպությունը 2018թ.-ին ոստիկանության կողմից խաղաղ ցույցի մասնակիցների և ցույցը լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնի ուժ գործադրելու, ոստիկանության բաժիններ անօրինական բերման ենթարկելու, օրենքով սահմանված ժամանակից ավել պահելու և հատուկ միջոցներ կիրառելու վերաբերյալ հանցագործության մասին բազմաթիվ հաղորդումներ, գրություններ և այլ փաստաթղթեր է ուղարկել ՀՀ դատախազություն և Հատուկ քննչական ծառայություն, ՀՀ ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանին և այլ կառույցներ: Կազմակերպության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել բերման ենթարկված քաղաքացիների հետ՝ իրականացնելով մարդու իրավունքների խախտումների փաստագրում:

Հավաքագրված փաստերի հիման վրա կազմակերպության կողմից ընդհանուր 19 գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Մասնավորապես, գանգատներում ներկայացվել են բռնության և վատ վերաբերմունքի դեպքերը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների արգելքի ներքո, ոստիկանության կողմից անօրինական բերման ենթարկվելու և ազատությունից զրկելու դեպքերը Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ներքո, հավաքները ցրելու և անձանց՝ տեղեկատվություն ստանալու անօրինական սահմանափակումները՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ արտահայտվելու ազատության և 11-րդ հոդվածով նախատեսված՝ հավաքների և միավորման ազատության հոդվածների ներքո, ինչպես նաև այս բոլոր

դեպքերի կապակցությամբ արձանագրված արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայության հարցը ՀՀ դատաիրավական համակարգում՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված՝ Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լույսի ներքո:

Ներկայացված 19 գանգատներից 12-ի կապակցությամբ Կազմակերպությունը արդեն ստացել է ՄԻԵԴ կողմից գործերի գրանցման որոշումները: 4 գործերի կապակցությամբ կազմակերպությունը պատասխան դեռևս չի ստացել:

2016թ. հուլիսյան դեպքեր

Կազմակերպության կողմից 2018թ. նոյեմբերի 17-ին բողոք է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ 2016թ.-ի հուլիսի 29-ին «Սարի Թաղ» թաղամասում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ տուժած անձանց վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 61205016 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին Հատուկ քննչական ծառայության որոշման և բողոքը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազության կողմից կայացված որոշումների դեմ:

Հատուկ քննչական ծառայության կողմից տրամադրված որոշման համաձայն՝ քրեական գործի վարույթը կասեցվել է «որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու» պատճառաբանությամբ:

Կազմակերպությունը դեռևս 2016թ.-ին ստանձնել էր Հուլիսյան դեպքերի ընթացքում տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների հետևանքով տուժած քաղաքացիների իրավական պաշտպանությունը: Սույն գործերով Կազմակերպության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ուղարկվել 32 գանգատ, որից գրանցվել են 28-ը:

ՄԻԵԴ ներկայացված այլ գործեր

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոմունիկացրել է Կազմակերպության իրավաբանների կողմից «Վելես» ՀԿ-ի նախագահ Մարինա Պողոսյանի անունից ներկայացված գանգատը: Գանգատը վերաբերում է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների կողմից Մարինա Պողոսյանի նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնության գործին, որը քննվել է հայաստանյան դատարաններում, սակայն ԴԱՀԿ ծառայակիցները պատասխանատվության չեն ենթարկել:

Կազմակերպության իրավաբանների կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ է ներկայացվել Վ. Թեյմուրազյանի անունից: Դատարանը ներկայացված գանգատի վերաբերյալ կայացրել է վճիռ: ՄԻԵԴ-ն արձանագրել է Դիմումատուի՝ անօրինական ազատազրկման, ինչպես նաև ոստիկանության ծառայակիցների կողմից անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու համար բարոյական վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի խախտում՝ Կոնվենցիայի 5.5-րդ և 13-րդ հոդվածների հիման վրա:

Ընթացիկ և ավարտված գործեր

Կազմակերպության իրավաբանները տարվա ընթացքում նաև իրավական աջակցություն են տրամադրել Կազմակերպությանը դիմած քաղաքացիներին քրեական, քաղաքացիական, վարչական ոլորտներում: Մասնավորապես, տրամադրվել է.

- Իրավախորհրդատվություն՝ սեփականության հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ, որոնց ներգրավված են պետական մարմինները (կազմվել են դիմումներ, հայցադիմումներ, միջնորդություններ և վերաքննիչ բողոքներ),
- Իրավախորհրդատվություն՝ կապված գրավի ինստիտուտի և գրավատուի իրավունքների հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործառույթների և կայացրած ակտերի հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման հետ (կազմվել են հայցադիմում, միջնորդություններ),
- Իրավախորհրդատվություն՝ կապված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված աշխատանքային իրավահարաբերությունների հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված անձին անհայտ բացակայող ճանաչելու իրավահարաբերությունների հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված արդար դատաքննության, դատավճռի օրինականության հետ,
- Իրավախորհրդատվություն՝ կապված ՀՀ ոստիկանական ակադեմիայում ուսման, կնքված պայմանագրի և վնասների հատուցման հետ:

Մասնակցություն և ներգրավածություն

Կազմակերպության աշխատակիցները տարվա ընթացքում մասնակցել են տեղական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված՝ մարդու իրավունքների տարբեր միջոցառումների:

Միջազգային ասպարեզում հատկանշական են կազմակերպության ներգրավվածությամբ հատկապես հետևյալ միջոցառումները՝

- 2018թ. մարտի 12-ին Կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Բրյուսելում կայացած Եվրոպական Միության Արևելյան Գործընկերության նոր ճարտարապետության ներդրման մեկնարկի միջոցառմանը:
- Կազմակերպության նախագահը Հայկուհի Հարությունյանը 2018 թվականի մարտի 13-ին մասնակցել է Բրյուսելում կայացած CONCORD միջազգային ցանցի HUB3 գարնանային հանդիպմանը, որի հիմնական թեմատիկ շեշտադրումը եղել է քաղաքացիական հասարակության գործունեության տարածքի բարելավումը:
- 2018թ. մարտի 14-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը մասնակցել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգային խմբի հանդիպմանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:
- 2018թ.-ի մայիսի 16-ին Կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի ունեցած ԵՄ-Ռուսաստանի քաղաքացիական հասարակություն Ֆորումի գլխավոր ասամբլեային:
- 2018թ. մայիսի 24-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը մասնակցել է ԵԽԽՎ մոնիտորինգային հանձնաժողովի Հայաստանի մասով համազեկուցողներ Ջուզեպպե Գալատիի, Յուլիա Լովոչկինայի և հանձնաժողովի ղեկավար Բաս Կլենի հետ հանդիպմանը:
- 2018թ.-ի հունիսի 14-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը մասնակցել է Վրաստանում տեղի ունեցած՝ «Ազատությունից զրկման վայրերի մշտադիտարկողների համար» թեմայով աշխատաժողովին, որը կազմակերպվել էր Միջազգային Բանտային Բարեփոխումների կազմակերպության կողմից:
- 2018թ. օգոստոսի 2-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը մասնակցել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցած՝ ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային

դաշնագրի դրույթների կատարման վերաբերյալ Հայաստանի երրորդ պարբերական զեկույցի հանրային քննարկմանը:

- 2018 թվականի սեպտեմբերի 10-ին կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի կողմից կազմակերպված՝ «Հայաստանում հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության դերի վերաբերյալ» թեմայով քննարկմանը:
- 2018թ.-ի հոկտեմբերի 7-ից 9-ը կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Պրահայում տեղի է ունեցած՝ «Ժողովրդավարություն. քննադատատական փոփոխության անհրաժեշտությու՞ն» խորագրով 22-րդ ամենամյա կոնֆերանսին:
- 2018 թվականի հոկտեմբերին կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի մշտական հանձնաժողովը նիստին:
- 2018թ. նոյեմբերի 7-16-ը կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Արաքս Մելքոնյանը հանդիպել է հավաքների և միավորումների ազատության իրավունքի գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Կլեման Վուլենին:
- 2018 թվականի նոյեմբերի 12-14-ը կազմակերպության նախագահ Հայկուհի Հարությունյանը մասնակցել է Բրյուսելում կայացած՝ Սևծովյան տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների 11-րդ ֆորումին, որը կրել է «Կառուցել ավելի կայուն քաղաքացիական հասարակություն» խորագիրը:

2018թ.-ի հուլիսի 12-ին կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը ընտրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ:

Սրան զուգահեռ կազմակերության կողմից պատրաստվել են այլընտրանքային կարծիքներ, վերլուծություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ.

Այլընտրանքային կարծիքներ

- Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցին է ներկայացվել Կարծիք «Դատական օրենսգրքի» և «Դատախազության մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ, որը ներառվել է ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի գործողությունների ծրագրի 4-րդ փուլի արդյունքներում:
- ՀՀ գլխավոր դատախազության է ներկայացվել Կարծիք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:
- Արդարադատության նախարարության է ներկայացվել առաջարկություններ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրում ընդգրկելու նպատակով:

Վերլուծություն

- Կազմակերպության կողմից պատրաստվել է վերլուծություն **Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում: 2017-2018 թվականների օրենսդրական փոփոխությունների** վերաբերյալ:

Տեղեկանքներ

- Կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ-ում դատական իշխանության անկախության ապահովումը Սահմանադրական փոփոխություններին համահունչ» ծրագրի շրջանակներում պատրաստվել են Բարձրագույն դատական խորհրդի գործունեությանն ուղղված տեղեկանքներ:
- Կազմակերպության կողմից պատրաստվել է տեղեկանք՝ ուղղված 2018թ-ին իրականացված «Թավշյա» հեղափոխությունից հետո անմեղության կանխավարկածի պաշտպանության անհրաժեշտությանը ՀՀ-ում: